

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի փոխմարզպետ Վ.Բակլայանը

ք.Հրազդան

27.04.2012թ., ժամը՝ 11⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

- Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներ
- Լ.Միքայելյան, Ա.Ղազարյան - ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալներ
- Մ.Գարեգինյան-ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
- Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների կանխարգելման նպատակով տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների կողմից տարվող աշխատանքների և խնդիրների մասին:

/զեկուցող՝ Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ Գ.Գրիգորյան/

2. 2011թ. աշնանային զորակոչի արդյունքների և գարնանային զորակոչի նախապատրաստական աշխատանքների մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ փարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության պետ Ս.Հակոբյան/

3.Մարզի տարածքում ԶՕԸ-երի կողմից ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

/զեկուցող՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ.Եղիազարյան/

4.Այլ հարցեր:

ԼՍԵՑԻՆ՝

1.Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ Գ.Գրիգորյանի զեկուցումը մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հնարավոր հետևանքների կանխարգելման նպատակով տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների կողմից տարվող աշխատանքների և խնդիրների մասին:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ տարածքային ծառայությունների գործունեության համակարգման վարչության պետ Ս. Հակոբյանի զեկուցումը 2011թ. աշնանային զորակոչի արդյունքների և գարնանային զորակոչի նախապատրաստական աշխատանքների մասին:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Մ. Եղիազարյանի զեկուցումը մարզի տարածքում ԶՕԸ-երի կողմից ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին:

Ձեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ՝

Համայնքի ղեկավարներին և գինվորական կոմիսարիատներին՝

Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ 2012թ. գարնանային զորակոչի առաջադրանքի կատարումն ապահովելու ուղղությամբ:



Վ. ԲԱԿԼԱՉՅԱՆ